ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝ _____ «31» 08 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի

Հ. Թումանյանի անվան

N3 հիմն. դպրոցի 8-րդ <<Ա>> դաս.

Նվարդ Վոլոդյայի Մարուքյան

2023-2024 ուսումնական տարի

Դասղեկական ժամեր

I կիսամյակ

04.09 – 2023-2024 ուստարվա անելիքները

24.09 – Կարեկցանք և անտարբերություն

01.10 – Փոխօգնություն իմ կարծիքով

08.10 – Իմ սիրած գրական հերոսը

15.10 – Մեր շնորհալի նկարչուհին

12.11 – Կարգապահական հարցեր

19.11 – Արցախյան հերոսամարտի հերոսները

25.11 – Հանդուրժողականություն

03.12 – Ընկերասիրություն

10.12 – Իմ իդեալը

17.12 – Տարեմուտի խոհեր

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ***Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)*** 6-րդ «Ա» դասարանը նոր է սկսում ուսումնառությունը միջին դպրոցում: Շրջանը բավականին խնդրահարույց է, բարդ, ուստի երեխաները փոքր-ինչ լարված են, թեև բանիմաց են և առանց բարդությունների: Պարտաճանաչ են, բազմակողմանի զարգացած: Դասարանը տարեսկզբին համալրվեց վեց նորեկներով, ովքեր ևս պատրաստակամ և ուշիմ սովորողներ են:

2. ***Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում***

ՈՒ սումնական տարվա ընթացքում նախատեսվում են անցկացնել տարբաբնույթ զրույց-քննարկումներ տարրականից միջին դասարան անցման դժվարությունների, խնդիրների մասին: Հաճախակի կազմակերպել հանդիպումներ ծնողների և պարապող ուսուցիչների հետ I կիսամյակի ընթացքում:

Պարապող ուսուցիչների հետ վերլուծել ուսումնադաստիարակչական հարցեր, որոնք ուղղված կլինեն թերացող աշակերտներին հատուկ ուշադրություն դարձնելու միջոցառումներին: Կազմակերպել էքսկուրսիաներ, կինոդիտումներ:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր դաստիարակություն Հոգևոր դաստիարակությունը հայեցի դաստիարակության հիմնաբարն է: Հոգևոր արժեքների իմացությունը, արժևորումը խիստ կարևոր են հայ մարդու, ճշմարիտ քաղաքացու ձևավորման համար:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Գեղեցիկի, բարու ընկալումը շատ կարևոր է, քանի որ գեղեցիկի գնահատումը օգնում է նկատել գեղեցիկը, հոգու մեջ ծնում է գեղագիտական զգացողությունների ամբողջություն, որոնք օգնում են լինել լավատես և բարի:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն Կարևորագույն դաստիարակությունն է, քանի որ հայրենիքի փրկության և ազատության համար պայքարելը հայի գերխնդիրն է: Հաճախակի պիտի դիտել պատմական ֆիլմեր, ներկայացնել ազգային հերոսների:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Ֆիզիկական դաստիարակությունը օգնում է ունենալ առողջ ու պլացիկ մարմին, կանոնակարգում է առողջ ապրելակերպը:

Ֆիզիկական դաստիարակությանն են ուղղված արշավներն ու ֆիզկուլտուրայի դասերը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշխատանքային դաստիարակությունը սերմանում է հարգանք աշխատանքի և աժխատողի հանդեպ: Դրան են ուղղված տեխնոլոգիայի դասերը, դասարանական հերթապահությունները, շաբաթօրյակները

3.6 Բնապահպանական դաստիարակություն Բնության պահպանությունը կարևոր է նրանով, որ աշակերտների մոտ պատասխանատվություն է սերմանում շրջակա միջավայրի նկատմամբ: Անցկացնել այցեր այգի, կազմակերպել էքսկուրսիաներ:

4. Դպրոց –ընտանիք կապը Այս կապը շատ կարևոր է նրա նով, որ միայն դպրոց-ընտանիք սերտ կապի միջոցով է հնարավոր հասնել սովորողների հաջողությանը: Փոխվստահությունը, հարգանքն ու հավատը օգնում է ստեղծել բարդություններից զուրկ, սեփական կարծիք ունեցող անհատ:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁԸ	ԾԱՆՈԹ ՈՒԹՅՈՒՆ
1.	Հիշարժան տարեթվեր. 1.գրողներ 2.նկարիչներ 3.երաժիշտներ 4.արվեստի գործիչներ	տարվա ընթացքում	դասղեկ ԱԽ	
2.	Բանավեճի ակումբ. 1.Գեղեցիկն իմ պատկերացմամբ 2.Այ քեզ նորաձևություն	2-րդ կիսամյակ	դասղեկ ԱԽ	
3.	Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի պատկերասրահ, գեղագիտական կենտրոն, թանգարան	տարվա ընթացքում	դասղեկ ԱԽ	
4.	Հաճախել թատրոն, կինոդիտումներ/քննարկումներ/	տարվա ընթացքում	դասղեկ ԱԽ	
5.	Կազմակերպել գրքի քննարկում	1-րդ կիսամյակ	դասղեկ ԱԽ	
6.	Կազմակերպել ընթերցանության մրցույթ	1-րդ կիսամյակ	դասղեկ ԱԽ	
7.	Կազմակերպել լավագույն շարադրության մրցույթ	1-րդ կիսամյակ	դասղեկ ԱԽ	
8.	Անցկացնել ասմունքի դպրոցական փառատոն, պատրաստվել փառատոնի մարզային փուլին	հոկտեմբեր-նոյեմբեր	դասղեկ ԱԽ	

Բարոյական դաստիարակություն

Քաղաքացիական, հայրենասիրական, բարոյական, հոգևոր դաստիարակություն

	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁԸ	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
1.	Անցկացնել վարվեցողությանը, էթիկային նվիրված միջոցառումներ. ա. Ինչպես օգտվել սեղանից բ. Պահվածք՝ հասարակական վայրում (կինո, թատրոն, զբոսայգի) գ.Մրցույթ՝ <<Բարեկիթ ասպետ>>	տարվա ընթացքում 2-րդ կիսամյակ	դասղեկ ԱԽ	
2.	<<Աշակերտական էթիկա, վարքականոն>> - վահանակ	2-րդ կիսամյակ	դասղեկ ԱԽ	
3.	<<Իմ իրավունքը>> խորագրով միջոցառումներ, զրույց-քննարկումներ	2-րդ կիսամյակ	դասղեկ ԱԽ	